ԿԻՒՐԱԿԷ 15 ՄԱՐՏԻ 1881

Հրատարակվում է ամեն օր բացի երկուշաբթի եւ տօն օրերից։
Տարեկան գինն է 10 ռուբլի։
Առանձին համարներով իւրաքանչիւրը 5 կոպ.։

Խմբագրատունը բաց է ամեն օր բացի կիւրակէ եւ տօն օրերից առաւօտեան 10—2 ժամը կէսօրից յետ։

Յատուկ յօդուածներ դիմում են ուղղակի խմբագրութեան հետեւեալ հասցէով. Въ редъ. газеты «Мегу Айастани», въ Тифлисъ, կամ Rédaction de «Meghou Haïastani», à Tiflis (Caucase).

ՄԵԳՈՒ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

№ 40 ՔՍԱՆԵՒԶՈՐՈՐԴ ՏԱՐԻ № 40

ԿԻՒՐԱԿԷ 15 ՄԱՐՏԻ

Խմբագրութեանս ուղղած ինչ յօդուածները եւ ինչ նամակները պէտք է պարզ դրուած լինին գրողի ստորագրութեամբ եւ հասցէով։ Խմբագրութիւնը կարող է փոփոխել, ուղղել եւ կրճատել յօդուածները։ Խմբագրութիւնը իր վերայ չէ առնում յետ ուղարկել յօդուածները եւ պահում է երկու ամիս մինչեւ ցպահանջ։

Յայտարարութիւնների համար վճարում են ամեն մի բառին 1½ կոպէկ։

Յայտարարութիւնները ընդունվում են պ. Բ. Շահվերդեանի պալիխօնում։

Յայտարարութիւնները ընդունվում են հայերէն եւ օտար լեզուներով։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ։

Դժգոհութիւններ ս. Աթոռի և Շամախիի հասարակութեան մէջ։
Ազգային.—Թղթակցութիւնք Սիմֆերոպոլից և Վ.-Ագուլիսից։
Քաղաքական.—Քաղաքական լուրեր։
«Մեղու» հեռագիրներ։
Մանր լուրեր։
Խառն լուրեր։

ԹԻՖԼԻՍ, 15 ՄԱՐՏԻ 1881 թ.

Երեք օր առաջ Շամախուց պ. Մով. Աչ.-ից ստացանք մի հեռագիր հետեւեալ բովանդակութեամբ. «Էջմիածինն իւր անխոհեմ կարգադրութիւններով զրկեց հասարակութիւնը, ոտնակոխ արաւ նորա դարաւոր սրբազան իրաւունքները։ Այս պատճառով թեմական ղպրանոցի հոգաբարձուք, նոյնպէս և օրիորդաց ղպրոցինը և եկեղեցեաց երեսփոխանք հրաժարական տուին։ Հասարակութիւնը խռովութեան մէջ է»։

Մեզ յայտնի չէ, թէ ի՞նչ հարց է ղարթած Շամախում և ի՞նչ է պատճառը հասարակութեան վրդովվելուն, ինչպէս և երաչխաւոր չենք հեռագրի հաղորդածի ստուգութեան. միայն այսքանը կասենք, որ հեռագիրը տխուր տպաւորութիւն է գործում։ Եթէ ստոյգ է բոլոր հաղորդածը, տարակոյս չկայ, որ կայ մի հիմնաւոր պատճառ, որ ստիպել է հոգաբարձուաց և երեսփոխաններին հրաժարվելու իրանց պաշտօնից։ Էջմիածինը «զրկել է» հասարակութիւնը։ Սա մի ծանր խօսք է. ծնողը որդուն, հայր տեղ՝ քար է տուել և ձկան փոխարէն՝ օձ։ Մի՞թէ հաւատալի է, և ի՞նչ է չհաւատալի չէ, բայց յաճախ պատահող իրողութիւն է և մենք կարծում ենք, որ այդ նրանից է, որ ս. Էջմիածինը չատ անգամ առանց գործի էութեան ճշդիւ վերահասու լինելու կամ չափազանց հաւատալով անձնաւորութեանց ոմանց, որոնք զանազան հանգամանքներից օգուտ քաղելով՝ կարող եղել են միանգամ դրաւել նորա հաւատարմութիւնը, անում է կարգադրութիւնք, որոնց հետեւանքը լինում է այն, ինչ որ ահա հեռագիրը հաղորդել է, այն է հասարակութեան զրկանք և նորա վրդովումն։ Ս. Աթոռը մայր է ոչ թէ այս կամ այն անձնաւորութեանց, այլ հասարակաց. ուստի և որևէ խնդիր զարթելիս անչուշտ պէտք է ճշդութեամբ տեղեկութիւն հաւաքէ և կսրգադրէ այն, որ բաղմութեան, հասարակութեան չահն է։ Այսպէս նա միշտ պէտք կ'լինի սխալանքներից և կ'վայելէ, ինչ որ կ'պատկանի մի գթոտ մօր։

Միւս սխալը ս. Աթոռի, մեր կարծիքով իշխանութեան կենդրոնականութեան վերայ ունեցած անճիշդ գաղափարն է, որից այժը դուրս եկած է ժողովրդականութիւնից դուրս։ Մենք այս մասին կ'խօսենք իւր ժամանակ. կը յուսանք, որ ս. Աթոռն, եթէ արել է սխալ, կ'չանայ ուղղել այն և հանգըստացնել Շամախու հայ հասարակութեան խռովեալ սրտերը, հայրական կարգադրութեամբ և յարգելով նորա իրաւացի և օգտաւէտ պահանջները։ Եկեղեցի և դպրոց միշտ խաղաղ պիտի լինին և նոցա չահերին ծառայողները արդարութեամբ վարձատրվեն։

ԱԶԳԱՅԻՆ

ՍԻՄՖԵՐՈՊՈԼ

(Թղթակցութիւն «Մեղու Հայաստանի» լրագրի)

Փետրվարի 17-ին, բարեկենդանի երեքշաբթի օրը տեղւոյս հասարակութեան մէջ, որ մի շատ ու շատ ուրախացած կեանք է վարում, մի անսովոր շարժուձեւ էր ընկել։ Դորա արժանութիւն է մեծ. պ. Յովակիմ Սէֆէրեանցի ամուսնութեան քան և հինգ ամեայ յոբելեանը։ Մօտ հարիւր տղայ մարդիկ, կանայք ու աղջկերք այդ երեկոյեան ժողովուած էին տեղւոյս ամենամեծ հիւրանոցի մէջ։ Սակայն ցաւօք սրտի պիտի խոստովանիմ, որ բոլոր հասարակութեան երեսին պարզ կարելի էր կարդալ, նոցա առիթիանս ունեցած յարաբերութիւններից պարզ կարելի էր տեսնել, որ նոքա չունին ներքին կապով շաղկապող մի ընդհանուր ձգտմունք, որ ամեն մի հասարակութեան յարատև գոյութեան անհրաժեշտ պայմանն է։ Ցաւալի էր տեսնել նամանաւանդ, որ մեր եւրիտասարդներն ու օրիորդները առաւել բարւոք էին համարում օտար լեզուով կոտրատել քան իրանց մայրենի բարբառով խօսել։ Այդ զզալի պակասութիւնը տեսնելով, վաղուց էր, որ մի քանի բանիմաց անձինք խորհում էին մի որ և է հնարք գտնել տեղւոյս հայ ընտանիքներին միմեանց հետ յարաբերութեան մէջ դնել և այդ կերպով ընդլայնացրել արտաքին աւերիչ ազդեցութեան։ Եւ այս երեկոն շատ յարմար առիթ տուաւ իրագործել այդ գեղեցիկ մտադրութիւնը։ Ընտրիքի ժամանակ, երբ առաջարկուեցաւ պ. Սէֆէրեանցի և նորա ամուսնու կենաց բաժակը, հանդիսականներից մէկը վեր կացաւ և դառնալով դէպի պ. Սէֆէրեանցը, խօսեց համառօտապէս այս օրուայ նշանակութեան վերայ և առաջարկեց նորա ամուսնոյն ի յիշատակ այս օրուայ հիմնադիր լինել Թումու հայուհեաց ընկերութեան, որի նպատակը պիտի լինի տեղւոյս հայերի մէջ ուսումն տարածել։ Պ. Սէֆէրեանցը, որ միշտ մեր գործերի մէջ առաջինն է եղել և այստեղ յայտնեց իւր բարեգործութեան պատրաստակամութիւնը. նա այդ նպատակաւ իբրև դրամագլուխ տուաւ իւր ամուսնոյ անունով երեք հարիւր րուբլի։ Ազգասէր պարոնի օրինակին հետեւեց նորա եղբայր Յակորը, այդ նորակազմ ընկերութեան ընծայելով երկու հարիւր ռուբլի։ Ինչպէս լսվում է, շատերը պատրաստ են ձեռնտու լինել այդ գործին, բայց սպասում են ընկերութեան կանոնադրութեան, որ նոյն իսկ այդ երեկոյեան յանձնուեցաւ պատասխել մի քանի անձանց։ Յայտնելով մեր խորին յարգանքը այդ բարեսէր պարոններին, յուսով ենք, որ խոխմե ազգայինք, որոնց մէջ քիչ չեն հարուստները, կը գդան մի այսպիսի ընկերութեան ծանրակշիռ նշանակութիւնը և ամենուրեք օգնութեան ձեռն կը կարկառեն նորան։

Մէ հանդիսական.

Վ. ԱԴՈՒԼԻՍ

2 մարտի.

(Թղթակցութիւն «Մեղու Հայաստանի» լրագրի)

Փետր. 27-ին տեղւոյս տղայոց ուսումնարանի ընթերցարանում կայացաւ ընդհանուր երեսփոխանական ժողով։

Այս ժողովում խօսուեցաւ 3 դէպ. հարցերի վերայ։

1) Նոր հոգաբարձուք ընտրելու, 2) տեղւոյս ուսումնարանի ծախսով ուսում առած և այժմ ուսուցիչ պ. Միքայէլեանի ռոճկի և 3) բարերարներից պրամագլխի տուողները հաւաքելու և ընդարում ուսումնադատական հողի վերայ չինութիւն անելու մասին։

Թէև նախկին հոգաբարձուաց ժամանակը չէր լրացել—դեռ մինչև մայիս ամիս ժամանակ ունէին,—բայց նոքա առաջարկեցին թէ՝ որովհետև զանազան անձնական զործերի պատճառով չեն կարող հսկել չինութեան վերայ և թէ իրանցից չատով յուսարութիւն դնացող կ'լինի՝ ուստի խնդրին այժմեանից ընտրել։

Սկսուեցաւ ընտրութիւնը և ձայների բազմութեամբ ընտրուեցան չորս հոգաբարձուք և երկու փոխանորդ (կանդիդատ)։ Ահա յարգելի նոր հոգաբարձուց ազգանունքը. պ. պ. Յովհաննէս Փանանց, Առաքել Ներսիսեանց, Սարգիս Չախնազարեանց և Հայրապետ Արամեանեանց, կանդիդատներ նշանակուեցան պ. Թևան Արամեանեանց և պ. Սարգիս Դուլզարեանց։

Նոր հոգաբարձուք առաջին անգամ չէ, որ յանձն են առնում այդ ծանր պաշտօնը, այլ չատ անգամ հոգաբարձական պաշտօն են վարել և միշտ ցոյց են տուել իրանց պատրաստակամութիւնը այդ գործի մէջ. իրանց գործունէութիւնը, անցեալը երաչխաւոր է ապագայի գործունէութեանը։ Մենք չատ ուրախ ենք, որ այս անգամ ազուլեցիք իրանց անձականը թողած հասարակական չանը աչքի առաջ ունեցան։ Շնորհաւորում ենք նոր հոգաբարձուց, ցանկանում ենք նոցա արիութիւն, սէր յօուսումնարանի պայծառութեան։ Շնորհակալութիւն ենք յայտնում և նախկին հոգաբարձուց, որոնք արին ինչ որ կարողացան. այս տարուայ դոցա արածը արժանի է շնորհակալութեան։

Այս նոր հոգաբարձուց պարտականութիւն է անյապաղ հաւաքել ուսումնարանի բարերարներից ստորագրած դրամագլխի տասանորդը և այդ գումարով չինել տալ մի չինութիւն բաղարում ուսումնարանապատկան հողի վերայ, ուր պիտի վոխադրուի չինական դասարանը վարձով և մնացած սենեակները նոյնպէս վարձու տալ յօգուտ ուսումնարանի։

Ապա խօսուեցաւ պ. Միքայէլեանի հարցի վերայ, որ մեծ հակաճառութեան նիւթ եղաւ։ Ահա հարցը. ուսումնարանը իւր ծախքով պարոնին ուղարկել է Թիֆլիսի Ուսուցչական դպրոցը, որ այնտեղ աւարտելուց յետոյ գայ և այստեղի ուսումնարանում ուսուցչի պաշտօն վարէ իւր կարղացած տարիներից երկու տարի աւելի, տարեկան ռոճիկ 150 մանէթ (։)։ Պ. Միքայէլեանը ուսման սիրով ոգեւորուած՝ առանց քննելու այդպիսի տարօրինակ պայմանը՝ ընդունում է։ Աւարտելուց յետոյ պարոնը խնդրում է, որ ուսումնարանը իւրեան օգնէ բարձրագոյն ուսում ստանալու և աւելի կատարելագործուած ուսումնարանին ծառայէ, իսկ հոգաբարձուք յայտնում են, որ գոյ դեռ մի տարի ուսուցչութիւն անի և այդ մի տարուայ ընթացքում նորա խոստանում են որքան հնար է աշխատել բարերարներ գտնելու նորա համար, և մինչդոյն ժամանակ յայտնում թէ փոխանակ տարին 150 ռ. տալու պիտի ուզում կանեն։ Պարտքը եկաւ և այժմ ուսուցիչ է։

Այժմ այդ ժողովում խօսուեցաւ թէ որքան պիտի լինի. չատերը իրանց վաճառականական կէտից քննելով առա-

ջարկեցին որ 150 ռ. ոչ մի կոպէկ ա-ւել չտրուի (խեղճ ոտարպրեալ), բայց այդ խիստ առաջարկութիւնը մերժուեցաւ և երկար խօսակցութիւնից յետոյ վճռուեցաւ, որ նորան 300 ռ. տան, իսկ եթէ կ'խոստանայ և հետեւալ տարինը ևս մնալու, ռոճիկը էլի աւելացնեն ժողովի համաձայնութեամբ, ապա թէ ոչ նորանից ստանան ուսումնարանի արած ծախսը իւր տոկոսով։

Գալով նորան օգնելու մասին, հոգաբարձուք յայտնեցին որ ուսումնարանը միջոց չունի օգնելու։

Եթէ ուսումնարանը միջոց ունի տարեկան նշանաւոր գումար տալու տնօրէնին և այլ պիտոյից, մինչ չի ունենալ 600 ռ. տարին տալ, որ գնար երեք տարի ժամանակով աւելի կատարելագործուելու և ապա դար քիչ ռոճկով ծառայէր ուսումնարանին և մինչ ուսումնարանի մի քանի տարուայ ընթացքում իւր ծախսը հանելով մեծ օգուտ էլ չէր ըստանալ թէ նիւթապէս և թէ բարոյապէս....

Ցանկալի կ'լինէր, որ նոր հոգաբարձուք մտածէին այս մասին, կամ բարերարներ գտնէին և կամ ուսումնարանի դրամագլխից օգնէին։ Մենք էլի կ'դառնանք այս հարցին։

Ապա խօսուեցաւ և այլ մի քանի հարցերի վերայ։

Ընդհ. ժողովը չատ խաղաղ վերջացաւ, որ չէ տեսնուած տարիների ընթացքում։

Մի այլ լուր, բայց ցաւալի, անմխիթար լուր. ամսոյս 27-ի գիշերը անցեալ աւազակները յարձակուում են ս. Շմաւոն եկեղեցու ծեր գործակալ քահանայի տան վերայ, թափուում են սենեակը և թշուառ այրի քահանային, որ առանց ծառայի միայնակ ապրում էր, բռնելով իւրեանց անասնական վայրագ կամքը կատարում են—մորթում են նորան։ Ապա հանդիստ սրտով, միամիտ ինչ որ տանը գտնում են յափշտակում են տանուտէր Աղէ գաղտնութիւնը կատարուելիս ոչ ոք չէ իմանում, ոչ մի աղաղակ չէ լսուում։ Առաւօտեան բարեպաշտ մարդիկ երկար սպասում են զանգակի հնչիւնին, հետաքրքրուում են, գնում քահանայի տունը, դուռը բաց են անում և ինչ են տեսնում սարսափած.—թշուառ ալեզարդ քահանան դրան մօտ ընկած, դլուխը պարանոցից կախուած և արեան հեղղը սենեակը ողողած։ Երեւում էր որ թշուառը ընդդիմացել է, կամ սուրն է բռնել, որովհետև ձեռքի վերայ սրի կտրած տեղը երեւում է և ճկոյթ մատի կէսը չ'կայ։ Իսկոյն յայտնում են ոստիկանութեան։

Գալիս է պ. Սուլխանեանը, մարմինը քննելուց յետոյ քննութիւն է բաց անում, կասկած է ընկնում դրացի թուրքերի վերայ, թէ նոքա ճանաչում են այս անդիմութեան հեղինակներին։ Պ. Սուլխանեանը յայտնում է թուրքերին. «Եթէ մինչև ուխ օր դուք չ'գտնէք յանցաւորներին և ձեռքերը կապած չ'յանձնէք ոստիկանութեան, հաւատացէք ամենայն տեսակ երդմամբ, որ ձեզ ամենքիդ պիտի աքսորեմ ուրիչ հեռաւոր տեղեր, ես այս ասում եմ և դուք կը տեսնէք որ ես կ'կատարեմ խոստումս. այսպիսի գազաններին, որոնց դուք ճանաչում էք, որոնց դուք պաշտպանում էք՝ պէտք է պատժել օրէնքի ամենախիստ պատժով. ամօթ ձեզ, որ բոլոր աւազակութիւնից, յանցանք գործելուց ուրիչ բարի գործ գործել չ'գիտէք»։

Թէ ինչ հետեւանք կունենայ, կ'զբաղուին յանցաւորները, թէ բոլոր թուրքերը իրանց պատիժը կ'ստանան ժամանակին կ'յայտնեմ։

Յոյս ունինք, որ պ. Սուլխանեանը իւր օրինակելի խօսքերին հաստատ կ'մնայ և կ'դատէ ըստ արժանոյն։

Ագուլիսում չատ սպանութիւններ եղել են, բայց քահանայի սպանել..... տեսնուած չէր։ Ջարմանալի վայրենիք են այստեղի թուրքերը. ապրում են հայով, մի կտոր հայ են դանում հայի մէչտորդութեամբ և իւրեանց երեսատիսութիւնը յայտնում են սպանմամբ... իսկ հայը, ազուլեցի հայը ձեռքերը խաչած դողում է թուրքից։

Վ.

ԿԱՂԱՔԱԿԱՆ

Վիէննայի «Polit. Corresp.» լրագրի Պօլսոյ թղթակիցը գրում է մարտի 4-ից.—Պալատի ոստիկանութիւնը վերջին ամանակներումս մեծ խստութեամբ է վարուում։ Ոստիկանական գործակալների թիւը, որոնց ապրուստը սուլթանն է հոգում, նշանաւոր թուով աւելացրած է։ Ինքը սուլթանը չատ անգամ ձիածաղում է սոցա չափից դուրս եռանդի վերայ։ Այս օրերումս մի հայ նկարչի, Ցավեփի Մանասի մաքուն է անցել ուղարկել սուլթանին նորա փոքրիկ պատկերը, որ նա մեծ աչքառութեամբ հանել է ձեռք բերած մի լուսանկարից։ Նա յայտ ուներ, որ գործ հանդր կ'ստանայ մի որ և իցէ չքաւչան, այն ինչ նորան հրաւիրում են ոստիկանութիւնն։ Ա.յսուհետ նորան հարցնում են, թէ ինչպես է համարձակուել նա սուլթանի պատկերը նկարելու, և մի և նոյն ժամանակ նորան հանկացնում են, որ եթէ մէկ էլ համարձակուի այդպիսի բան անել, նորան առանց այլ և այլութեան կ'աքսորեն Ֆայսուն, Սև ծովի եզերքը։ Մանասը հաւատացնում էր, որ ինքը ամենախորը յարգանք է զգում դէպի նորին մեծութիւնը, և խոստացաւ, եթէ այդ չէ գործ գալիս կառավարութեան, երբէք էլ չի մտածիլ սուլթանի պատկերը հանելու վերայ։ Չ'նայելով նորա տուած բացատրութիւններին, նորան կրկին հրաւիրելն դատարանական քննչի մօտ, որը հարցրեց նորան թէ՝ ինչ պատճառով է նա այդ պատկերը նկարել և թէ դորա նով չէ մտածել արդեօք ծանօթացնել ինչ ինչ դաւադիրներին սուլթանի դէմ։ քի գծագրութեանը հետ։ Մանասը յիշեցրեց, որ պատկերը նա ուղարկել է ուղղակի սուլթանին և չի կամեցել ուրիշին ցոյց տալ մի որ և իցէ մարդու։ Այն ժամանակը նորան հարցրին, արդեօք նա յարաբերութիւն չունի Հայաստանի վանդատոր խռովարարների հետ։ Դորան նա պատասխանեց, որ սուլթանը նորա եղբօրը անցեալ տարի ուղարկեց Աբեդին փաշայի հետ Հայաստան, իբրև մանաւոր կոմիսար և թէ նորա ընտանիքը միշտ հաւատարիմ է եղել սուլթանին։ Այսպիսով նա դժուարութեամբ ազատուեցաւ պետութեան դէմ մտանութեան մեղադրանքից, որը հիմնած էր միայն նորա վերայ, որ նա սուլթանի պատկերն է նկարել։ Հաւանական է, որ այս բոլոր ինտրիգան սարքած է Թիւրք պալատական նկարիչ Շեֆքիր-Անմէտ-բէյը (Շահար-Ահմէտ-բէյը)։

* * *

Մարտի 4-ից գրում են Պօլսից «Polit. Corresp.» լրագրին.—Շարաթուայ մէջ դեպանները հաւաքուում էին գրեթէ ամեն օր. մինչև օրս Թիւրքիայի կողմից նրանց դեմ ոչ մէկ հաղորդութիւն չէ եղել ոչ պաշտօնական, ոչ էլ կէս-պաշտօնական։

* * *

Պօլսից մարտի 7-ին հեռագրում են «Standard» լրագրին.—Թիւրքիայի կողմից երրորդ կոմիսարը նշանակուած է յայտնի Մուխտար-փաշան, որը ամենաջերմ կողմնակիցն է խաղաղութեան։ Այս օր խորհուրդ էր Գօչենի մօտ, որին և մասնակցում էր ռուխտար-փաշան։ Խորհուրդը վերջացաւ ժամը 4-ին կէսօրից յետոյ։ Խորհրդաժողովը խիստ գաղտնի է պահուում, այնպէս որ խիստ քչերին է յաջողուում դեսպանատներում ծառայողներից մի որ և իցէ բան իմանալու բանակցութեանց վերաբերեալ։ Այսուհետ սիրում է ասել այն համոզմունքը, որ դեսպանները պիտում են, որ Թիւրքիան առաջ անի իւր առաջարկութիւնը, բայց ինչպէս արդէն մի քանի անգամ գրել եմ, Թիւրքիան իսկապէս ոչինչ չունի առաջարկելու։ Տարակոյս չ'կայ, որ սուլթանը հաստատ վճռել է մի քանի կէտերի մասին զիջումներ չանել, բայց պալատականների խորհուրդի բոլոր աշխատանքները ոչինչ հանձայնութիւն գլուխ չ'բերէն այն հոդերի վերաբերմամբ, որ կարևի կ'լինի Յունաստանին տալ։ Եւ ճշմարիտ, տեմանի գինը գլուխ բերելու համար հարկաւոր կ'լինին օրից օր, կէտ առ կէտ անդադար երկու կողմից միջնորդութիւններ։ Անգլիան, Ֆրանսիան և Իտալիան իրանց ներկայացուցիչների հետ խորհուրդ են արել Թիւրքիայում ապրող օտարների պատասխանատուութեան մասին դէպի ապիպողական փոխառութիւնը։

«ՄԵՂՈՒԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ).

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13-ին մարտի։ Ներքին գործոց նախարարը հրամայեց Ս.-«Պետերբուրգսկիա Վեդոմոստի» լրագրի № 67-ի առաջնորդող յօդուածի համար թէ՛ հեղինակին և թէ՛ խմբագրին ենթարկել դատաստանական պատասխանատուութեան հանձայն 281 և 1035 յօդուածների կանոնադր. պատիժ. մասին։

Երեկ Պետերբուրգ ժամանեցին Ուէլսի իշխանն ու իշխանուհին, Գերմանիայի թագաժառանգն և Աւստրիայ արքիդուքս Կարլ-Լուդովիկոս։

ԼՈՆԴՈՆ։ Հասարակայ ժողովարանում Դիլքը յայտնեց, որ ռուսաց Նոր-Թագաւորը յետ է կանչել դեներալ Սկոբոլեվին և ընդ նմին հրամայել է դադարեցնել ձեռնարկութիւնը Միջին Ասիայում։

Նախարար Նորկոտին վոստոյով ուղարկելեն դեժոխային մեքենայ։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲԻՐԺԱ.
9-ին մարտի.

Ազբ. բանկ. 1-ին	96	—
— — 2-րդ	93	—
— — 3-րդ	93	50
— — 4-րդ	93	25
Վիճակահ. 1-ին	224	25
— — 2-րդ	216	50
Արև. փոխառ. 1-ին .	92	37
» » 2-րդ .	92	5
» » 3-րդ .	92	12
Լոնդոն	24	75
Բերլին	125	75
Համբուրգ.	211	25
Փարիզ	262	25
Ոսկի	7 ռ.	94 կ.

Բիրժայի վիճակը խաղաղ է։

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

«Уголъ» լրագիրը հաղորդում է հետեւեալ տարօրինակ երեւոյթը.—«Հաւատի աղբիւրից տեղեկացնում ենք հետեւեալ զարմանալի երեւոյթը։ Երկու չարաչար առաջ թագաւորը սկսել էր իւրաքանչիւր առաւօտ նկատել իւր պատուհանի վերայ սպանած ագռաւներ. երեւեցաւ, որ մի անագին զիշակեր թռչուն, ոմանք ասում են անդղ, ոմանք՝ արծիւ, բայն է դրել ձմերայնի պալատի տանեայց վերայ։ Նրան սպանելու բոլոր ջանքերը ապարդիւն եղաւ մի քանի չարաչար։ Այս հանդամանքը վրդովից թագաւորին. Նա յայտնեց՝ թէ դա մի գէշ նախազուշակութիւն է։ Վերջապէս որոգայթ են լարում, թռչունը բռնւում է ոտքից, բայց այժ է ազնուում թռչել և որոգայթը իւր հետ քարշելով՝ ընկնում է Դերժորժովսկա հրապարակի վերայ, ուր և վերջնում են։ Այդ անդղը մինչև այնպիսի վերին աստիճանի զերբնական մեծութիւն ունէր, որ նորան պիտի դնեն թանգարանի մէջ։ Մարտի 1-ին, երեկոյեան մօտ 10 ժամերն գիտել են մի անչափ տարօրինակ երեւոյթ, երկնքի վերայ կար մի պայծառ ու բաւականին խոշոր դիսաւոր աստղ կամձես երկու պոչերով—մինը դէպի վեր, միւսը՝ աւելի երկար՝ դէպի վայր։ Բոլոր երեւոյթը չարունակուեց մօտ 20 րոպէ»։

* * *

Հաւլարաում սկսում են հիմնել ընթերցարան։ Պէտք է յուսալ, որ հիմնադիր անձինք անցեալ փորձերը աչքի առաջ ունենալով՝ չեն խառնի իրանց չրջանում անպէտք և ջնասակար անձինք։ Մի քահանայ ընթերցարանի մասին այսպիսի կարծիք է յայտնել. «Եթէ գինին ու արաղն էլ լոկ կըլի, ինչի չէ. ինչքան որ ինձ վայ կ'ընկնի՝ ուրախութիւնով կը տամ»։

* * *

«Մշակի» մէջ երբեմնապէս լուրեր են հրատարակւում հետեւեալ բովանդակութեամբ. թէ ինչու այս ինչ հաւլարացին Մարիամեան ուսումնարանը թողած 1000-ներ Գայլանեան մրջնակարգ դպրոցին կտակեց։ Պէտք է հարցնել այդպիսի լուրեր հաղորդողներին, թէ՝ «արդեօք հաւատարմութիւն գրաւելը գործով կ'լինի թէ խօսքով։ Նուիրատուն գործին է նայում և ոչ խօսքին։

* * *

Մի հաւլարցի վախճանուելիս կտակել էր 500 ռ. նուիրել Գայլանեան դպրոցին։ Բայց կտակողի ծխատէր քահանան ընդդիմանալով այդ կարգադրութեանը՝ չատ աշխատեց, որ այդ գումարը դպրոցին կտակելու փոխանակ՝ նորանով իւր համար մի լաւ փարաջայ կարել տայ։ Բայց չը յաջողեցաւ։

* * *

Հաւլարտում Գիժ-Ղազար անունով մի խելոք մարդ կայ, որ ապրում է գրօսնութեամբ մի քանի կոպէկ աշխատելով։ Վերջերս քահանան նորանից 45 ռ. փող է առել, որ իւր մօտ ապահով պահէ մինչև ցաղանջէ։ Բայց այժմ խելոք Գիժ-Ղազարը չատ էլ պահանջում ու պղտատում է, բայց «էհ, ասում է կուլ տուղ քահանան, մոռացիր. մինիամ քո հօր հոգուն պատարագ ես անել տուել»։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ջոխաստրօվեան օրիորդ.—Թմիչկ Տանները յիրաւի կարողացաւ յաջողութեամբ վերջացնել իւր քառամսեայ, ծանր բայց այդպիսի օրինակներ չատ հազիւ կարող են կրկնուիլ։ և միևնոյն ժամանակ լինել ինքնակար։ Ընդհակառակն մի ուրիշը, Լիդովիկ Կօրնարօ, ցոյց տուեց չափաւորութեան բաւ հետեւանքները. Կօրնարօ, (ծնուելուց վ.հնեհոտում 1467-ին) 40 տարեկան հասակում մաշել էր բոլորովին իւր մարմնական ուժերը չարաչար գեղի հիանք վարելով։ Նա տանջուում էր վոթայից, ոտնացաւից և դող ունէր, ինչն իրան զգեցնում նա փոխեց իւր կենցաղավարութիւնը, սկսեց ընդունել օրական 24 լօտ կերակուր, և հետեւանքը.—նորա առողջութիւնը վերականգնեցաւ և նա առողջ կէս գար չգիտէր, թէ ինչ բան է հիւանդութիւն։ Ապրելով մինչև 91 տարին, նա բարեկամների խորհրդով աւելացրեց իւր օրական ուտելիքը մինչև 28 լօտ. բայց այս բանը նորան թանկ նստեցաւ. նա մսալլուա և խիստ գարձաւ, ամեն մի հասարակ բանը նորան բարկացնում էր, փորացաւը կրկին սկսուեցաւ, և այս բոլորը սպիպեց նորան կրկին գառնալու իւր առաջուան կեանքին։ 95 տարեկան հասակում նա կրկին իւր առաջուայ առողջութիւնը և հոգոյ ուրախ տրամադրութիւնը ստացաւ, և մնծ ուրախութեամբ նկարագրում էր իւր չարաւորութեանը վարած կեանքի վարչութիւնը։ Նա ղգում էր 25 տարեկան երիտասարդի կենդանութիւնը, հեղինակում էր գրամներ և մինչև անգամ աչխատում էր վ.հնեհոին ամրացնելու ժամանակ։ Նորա կեանքի մինչև հարիւրերորդ տարին նորա զօրութիւնը և դգայարանքները, մանաւանդ տեսանելիքը և լսելիքը նորան հաւատարիմ մնացին, նորա ձայնը, քիչդուրթիւնը թարմ էին, դատողութիւնը ոչ մի րոպէ չէր դադանանել նորանո։ Նա ամէն ժամ չարունակ աչխատում էր գրասենեակի առաջ, գնում էր գրօսանքներ կատարելու, այցելում էր հասարակութիւնները, պարապում էր երաժշտութեամբ, որի մէջ նա բարձր կատարելութեան հասաւ։ Այն խակ մահուանից առաջ նա երդ երգից այնպէս ուժով և ոգևորութեամբ, որ միայն գուցէ քսանամեայ երիտասարդին յատուկ էր։ Իւր «Discorsi della vita sobri.» հեղինակութեան մէջ նա չափաւորութեան վերայ այսպէս է գրում. «Նա լուսաւորում է զգայմունքները, զարթեցնում է ընդունակութիւնը, ուրախացնում է սիրտն և ամրացնում է մարդու քիչդուրթիւնը։ Շնորհիւ նորա հոգուց վայր են ընկնում երկրային չղթաները, որոնք նորա աղատութիւն են ճնչում»։ Նա մեռաւ Պադուայում, հարիւր չորս տարեկան հասակում, առանց չարչարանքի, կարծես թէ քնեցաւ։

* * *

Ռուսական Քնարեր Բիւն.—Նապօլէօն I-ի Ռուսաստանի վերայ արչաւանքի ժամանակ ֆրանսիացիների ձեռքը ընկաւ մի ռուս գրէհիկ, որը ներկայացուցաւ կայսրին։ Նապօլէօնը թարգմանչի բերանով մի քանի հարցեր առաջարկեց նորան անդադրութեան մասին և յետոյ սկսեց խօսակցել իւր խոլի հետ ստացած պատասխանների մասին։ Ռամիկը մի կողմը հեռացաւ և կանգնեցաւ դինուորականների խոլի մէջ։ Ասոնցանաւորներից մէկը մտածեց մի փոքր կատակ անել այդ ռամիկի վերայ, և դրեց թամբաքով նորա ձեռքի վերայ N տառը։ Ջրմեցած դիւղային երկար ժամանակ տաքարուած նայում էր այդ անհասկանալի տառի վերայ և վերջը հարցրեց թարգմանչի միջնորդութեամբ թէ՝ այս ինչ է նչանակում։ Մէկը կատակի համար պատասխանեց. «մինչև այժմ դու Ալէքսանդր կայսեր հպատակն էիր, իսկ այժմ դու դարձար կայսր Նապօլէօնի սպրուկը և հէնց այս տառի միջոցով»։ Ոչ մի խօսք չ'տեսնելով ռամիկը, որ Նապօլէօնին հակաբրիտոս էր համարում, դուրս հանեց գօտիից կապիկը, դրեց ձեռքը կոճղի վերայ և մի հարուածով իր թամբը կտրելով՝ ձգեց այն տառիճանաւորի տոներին այնպիսի խօսքեր արտասանելով, որ թարգմանիչը և պատիւ կայսրի մինչև անդամ թարգմանել չ'կարողացաւ։ Նապօլէօնի վերայ այս տեսարանը մեծ ազդեցութիւն գործեց։

Խմբագիր Պ. ՍԻՄԻՕՆԵԱՆՑ.
Հրատարակիչ Հ. ԷՆՖԻԱՁԵԱՆՑ.

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ ТИФЛИСЪ 14-го МАРТА 1881 г. Типографія Амб. Энфіаджіанцъ и К. Տուն բժշկապետ Մ. Ռոտինեանցի։